ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կարիքների համար պրեմիում և ռեգուլյար բենզին ապրանքատեսակների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԷՀՕ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 12 փետրվարի 2025թ.՝

Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության «Էներգակապ» մասնաճյուղի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Պետրոսյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության «Էներգակապ» մասնաճյուղի ավտոտրանսպորտի և մեխանիզացիայի ծառայության պետ

Ա. Հովսեփյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության «Էներգակապ» մասնաճյուղի տեխնիկական բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Հարությունյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության աշխատակազմի գնումների գծով մասնագետ

1.Տեղեկություն՝ «ԷԷՀՕ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացրած հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը Eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-օրվա (10.02.2025)՝ ժամը 14:00-ն,

-հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

-էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 11.02.2025թ.՝ ժամը 14:00-ին

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ 1-3-րդ չափաբաժիններով սույն ընթացակարգի շրջանակում նախատեսված ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1.	Պրեմիում բենզին	2,425,000
2.	Ռեգուլյար բենզին	2,400,000
3.	Ռեգուլյար բենզին	10,600,000

3.Էլեկտրոնային ձևով՝Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի գործունեության հասցեն
1.	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30
2.	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Էրեբունի 12/4

4.Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի նախատեսված հիմնավորումների վերաբերյալ

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5.Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.«ԷԷՀՕ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Չափաբաժին 1.

Հ/Հ	Ընկերություն	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1.	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	1980416.67	20%	2376500	1980416.67	20%	2376500	
2.	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	2000625	20%	2400750	2000625	20%	2400750	

Չափաբաժին 2.

Հ/Հ	Ընկերություն	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1.	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	1960000	20%	2352000	1960000	20%	2352000	
2.	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	1980000	20%	2376000	1980000	20%	2376000	

Չափաբաժին 3.

Հ/Հ	Ընկերություն	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1.	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	8666666.67	20%	10400000	8666666.67	20%	10400000	
2.	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	8750000	20%	10500000	8750000	20%	10500000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 11.02.2025թ.՝ ժամը 14:30-ին: 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով «ՖԼԵԵՇ» ՍՊ ընկերությունը Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

«ՖԼԵԵՇ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՖԼԵՇ» ՍՊ ընկերության ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված N1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

-Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ընտրված մասնակցի և մերժված հայտի վերաբերյալ.

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ գնահատող հանձնաժողովն որոշեց.

«ՖԼԵՇ» ՍՊ ընկերությանը հայտարարել ընտրված մասնակից

9.2 «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊ ընկերությունը 3 չափաբաժինների համար ներկայացրել է ավելի բարձր գին, ուստի հիշյալ մասնակցի կողմից ներկայացված հայտը համարվել է մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10.Գնահատող հանձնաժողովն որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

Հանձնաժողովի անդամ ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Ա. Հովսեփյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Հարությունյան